

ԳԵՍՊԱՆ ԱՐԵԳՅՈՎ ՀԱՆՆԻՍԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ ՊԵՐՐԻԻ

Երեկ Յունուար 21ին, Լիբանանի խորհրդարանի նախագահ Նեպիի Պրերի ընդունեց Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ և իրաւոր դեսպան Արեգ Յովհաննիսեանը:

Հայաստանի Հանրապետութեան դեսպանը խորհրդարանի նախագահին փոխանցեց իր պաշտօնական Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի նախագահ Արմեն Խաչատրեանի ողջունները: Երկուստեք կարեւոր նկատուեցաւ միջխորհրդարանական համագործակցութեան դերը հայ - լիբանանեան յարաբերութիւններու պարզացման գործընթացին եւ անոր աշխուժացման անհրաժեշտութիւնը՝ 1993ին Հայաստանի եւ Լիբանանի խորհրդարաններուն միջեւ ստորագրուած «Գործակցութեան համաձայնագրի» շրջանակներուն մէջ:

Իր հերթին, բարձր գնահատելով հայ համայնքի դերը Լիբանանի մէջ, Նեպիի Պրերի շեշտեց հայ - լիբանանեան բազմադարեան կապերը ալ՝ աւելի խորացնելու հրամայականը: Ան նաեւ վերահաստատեց Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի նախագահին ուղղուած իր հրաւերը՝ այցելելու Լիբանան:

ԱՐԱՐԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝ ԱՇԽՈՒԺ ԸՆԹԱՅՔԻ ՄԷՋ

Արտաքին գործոց նախարար Մահմուտ Համմուտ երէկ տուաւ մամուլի ասուլիս մը, որուն մէջ յայտարարեց, որ Մեքսիկոյ նախագահ Ապոլո Ապոլո Ազգի թագաւորը, Սուրիոյ նախագահ Պաշտապ Ասատ եւ Եգիպտոսի նախագահ Հիւսէն Մուպարաբ, որոնց հետ ինք տեսակցած է եւ անոնց յանձնած՝ Մարտին Պէրուլի մէջ գումարտակների արտադրական վեհաժողովին ներկայ գտնուելու նախագահ գործէ մինչ Լահուրի հրահանգները, որոնցում են վեհաժողովին Պէրուլի մէջ գումարտակների արտադրական վեհաժողովին յայտնած՝ զօրավիզ կանգնելու անոր:

Համմուտ ըսաւ, որ արաբ ղեկավարները յոյս ունին, որ այս պայմաններուն մէջ վեհաժողովը կը յաջողի վերահաստատել արաբական իրաւունքներուն կառայածութիւնը:

Միւս կողմէ, նախագահ Լահուրի պատուիրակները կը շարունակեն հրահանգները յանձնելու աշխատանքը:

Այս ծիրին ներս, նախարար Ղասսան Սալամէ երէկ ուղղուեցաւ դէպի Մարոք, Հասան Զ. Թագաւորին յանձնելու հրահանգը: Նախարար Նալիլ Հըրուուի երէկ մեկնեցաւ Ֆուէյի վերաբեր յանձնելու իշխան շէյխ Ժապէր Անմէտ Սուպահի, իսկ նախարար Ապտէլ Ռահմ Մրատ Լիպիոյ ղեկավար Մուամմար Քազաֆիին հրահանգներ փոխանցելու ետք նոյն առաքելութեամբ պիտի այցելէ Թունիսի եւ Սուտան:

Նախարար Թալալ Արսուս երէկ մեկնեցաւ Պաղատա՝ իրաքի նախագահ Սատուս Հիւսէյնի յանձնելու հրահանգը:

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Մարտիկ եւ Ալիս Պողոսեան եւ զաւակուներ

Տէր եւ տիկին Մանօ եւ Ալիս Պողոսեան
Տէր եւ տիկին Կարօ եւ Նորա Հէքիմեան եւ զաւակուներ
Պողոսեան ընտանիք
Միքայելեան ընտանիք
Հիմաճեան ընտանիք
Գրեմիքեան ընտանիք
Սողոմոնեան ընտանիք
եւ Համայն ազգականներ կը գումար իրենց մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին՝

ՍՐԲՈՒՀԻ ՊՕՂՈՍԵԱՆԻ (ԾՈՃԵԱՂ՝ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 21 Յունուար 2002ին, յետ կարճատեւ հիւանդութեան, Սիտնի, Աւստրալիա:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահագոյ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին Մարտիկ Պողոսեանի բնակարանը, Զալքա, Հարպոյեան շէնք, bloc D, Երեքշաբթի 22, Զորքշաբթի 23 եւ Հինգշաբթի 24 Յունուարին:

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Միքայել Մէշեան
Տէր եւ տիկին Յովհաննէս Խոզոզեան եւ զաւակուներ
Տէր եւ տիկին Հրանդ Խոզոզեան եւ զաւակուներ
Տէր եւ տիկին Սեդրակ Մէշեան եւ զաւակուներ
Տէր եւ տիկին Արամ Մէշեան եւ զաւակուներ
Տէր եւ տիկին Սոֆի. Վարուժ Պետրեան
Վահրատեան ընտանիք
Զննագեան ընտանիք
Պայթարեան ընտանիք
եւ Համայն ազգականներ կը գումար իրենց մօր, մեծ մօր, գործնչին եւ հարազատին՝

ՆՈՒԱՐԴ ԽՈԶՈԶԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ 18 Յունուար 2002ին, Քանատայի մէջ, Սոնրէլ:

Յուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ 19 Յունուարին, Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, Քանատա:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահագոյ:

ՊԵԼՃԻՔԱԿԱՆ ԾԵՐԱԿՈՅՏԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՅՅԵԼԵՑ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՔ ՊԵՏԵՐՈՒՆ

Պելճիքական ծերակոյտի պատուիրակութիւնը, ծերակոյտի արդարութեան յանձնախումբի նախագահ ժոպէ Տիւպիի գլխաւորութեամբ երէկ այցելեց հանրապետութեան նախագահ Վոր. Էմիլ Լահուրի, խորհրդարանի նախագահ Նեպիի Պրերիի եւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի. պելճիքական պատուիրակութեան կ'ընկերակցէր Սապրա-Շաթիլայի ջարդերուն գծով Խորայէլի վարչապետ Արիէլ Շարունի ղէմ բացուած դատը հետապնդող յանձնախումբը:

Նախագահ Վոր. Էմիլ Լահուրի պատուիրակութեան հետ

հանդիպումին ընթացքին նկատել տուաւ, որ այս օրերուն պատգամներն են որ շրջաններու իրարարածութիւնները յար եւ նման են 1982ի Սապրա-Շաթիլայի ջարդերուն, եւ պէտք է պատժուին այս արարքներու հեղինակները, որ պէտք է անպատիժ չմնան եւ քաղաքական նկատումներով մոռացութեան չտրուին մարդկութեան ղէմ ուժերէն:

Նախագահ Լահուրի դրուատեց պելճիքական պատուիրակութեան ի գործ դրած ճիշդութիւնը:

Հանդիպումի սկիզբին, ծերակոյտական Տիւպի յայտնեց, որ պատուիրակութեան

այցելութեան նպատակն է պատկերասրահներով յայտնել Սապրա-Շաթիլայի, ինչպէս նաեւ կէս դարէ ի վեր Խորայէլի գործած ուժերներու արարքներուն, ինչպէս նաեւ Շարունի դատաւարութեան, որ պէտք է անպատիժ չմնան մարդկութեան ղէմ գործընթացի պատեմութիւնները:

Հարիրիի հետ տեսակցելէ ետք Տիւպի ըսաւ, որ տեղեկութիւններ հաւաքած են Սապրա-Շաթիլայի ուժերին մասին, եւ ահա նա ստանար վկայութիւնները անհերքելիօրէն կը հաստատեն իսրայէլեան բանակի եւ Շարունի մեղաւորութիւնը:

ՀՐԶՊԱԼԼԱ ԴԻՄԱԴՐՈՒԹԵԱՆ ՇԱՐԺՈՒՄ Է

Կ'ԸՍԷ ՏԻՊԷ

Պելճիքայի ծերակոյտի պատուիրակութիւնը, ծերակոյտի արդարութեան յանձնախումբի նախագահ ժոպէ Տիւպիի գլխաւորութեամբ այցելեց Սապրա-Շաթիլայի ջարդերու վոհերուն հաւաքական գերեզմանը, որ Տիւպիի հաստատեց, որ իսրայէլեան բանակն է այդ ուժերին պատասխանատուն եւ դատաւարութեան պէտք է յանձնուին այդ արարքը հրահանգած եւ գործած անձերը: Ան նաեւ դատաւարութեան ղէմ իսրայէլեան արարքները:

Պատուիրակութիւնը նաեւ հասնուցաւ իսրայէլեան արարքներուն ղիմադրութեան ուղեւ:

պում մը ունեցաւ ջարդի ականատեաններու հետ, որոնք պելճիքական ատեաններէն պահանջեցին արդար վճիռ արձակել Խորայէլի վարչապետ Արիէլ Շարունի ղէմ:

Հարաւի մէջ ՀրԶՊԱԼԼԱ պալլայի պատասխանատու շէյխ Նապիլ Քաւուք պելճիքական պատուիրակութեան նկատել տուաւ, որ Միացեալ Նահանգներ ճիշդ կ'ընեն ապակալուցումները Միջին Արեւելքը եւ միջհամայնքային գրգռութիւններ յառաջացնել Լիբանանի մէջ, ի նպաստ Խորայէլի:

«Ամերիկեան սպանալիքներուն ղիմադրութեան ուղեւ:

գիծէն, իսկ եթէ ՄԱԿ ու անոր Ապահովութեան Խորհուրդը ոչինչ կրնան ընել Խորայէլի ղէմ, ապա կը մնայ միայն պիտեալ ղիմադրութիւնը իբրեւ միջոց՝ պատագրելու բռնագրաւեալ շրջանները եւ ապահովելու իսրայէլեան բանակին մէջ արգելափակում լիբանանցիներու ապտարմակութիւնը», նշեց ան:

Պելճիքական պատուիրակութեան պետը հաստատեց, որ Միացեալ Նահանգներ եւ արեւմտեան կարգ մը երկիրներ ՀրԶՊԱԼԼԱ-ին ահաբեկչական կապմարեակներ կը համարեն, որոնք վեհապետներուն նկատմամբ մեծ է Արեւմուտքի մէջ:

Պելճիքական պատուիրակութիւնը այցելեց նաեւ Խորայէլի նախկին արգելարանը եւ հանդիպում ունեցաւ անցեալի հոս արգելափակուած եւ երու հետ:

ԿՈՒՉՈՒԻ

●Ոսկերչական հաստատութիւն մը կարիքը ունի ոսկի փայլեցնող մը (ձիւածի): Հեռ. 01 - 241424 եւ 01 - 263323:

ՍՍՏՅԱՆՔ

●«ՄԱՐԻԱՍ ՍԻՐԱՍՐ ԸՏՏ ԱՍԵ ՕՐ ԱՊՐԻԼ ՅՈՒՆԻԱՆԸ»

Հեղինակ՝ ՄԵՍՐՈՊ ՀԱՅՅՈՒՆԻ

Տպագրութիւն՝ Սիփուս Կրատա-րակչատուն Պէյրութ, 2001

ՍՍՏՅԱՆՔ

●«ՅՈՂՈՒՍԵՆԵՐՈՒ ժՈՂՈՎԱԾՈՅ»

Հեղինակ՝ ԱՐԳԵՆ ԹՕՓՃԵԱՆ

Հրատարակութիւն՝ ԱՐՄԱԸԻ Մոսկու, 2001

ՈՒՂՈՒՍԵՆԵՐՈՒ ԵՄԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԽՈՐՉՐԴԱԺՈՂՈՎ՝ ՉՈՒՅԵՐԻՈՅ ՄԷՋ

14-20 Յունուար 2002, Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Պոստի Միջեկեղեցական Կազմաւորման Կեդրոնին մէջ, տեղի ունեցաւ խորհրդաժողով մը՝ Ուղղափառ (քաղկեդոնական եւ ոչ քաղկեդոնական) եւ Աւետարանական (Evangelical) եկեղեցական ընտանիքներուն միջեւ, որուն գլխաւոր թեման էր «Աստուածաշունչը Ուղղափառ եւ Աւետարանական Աւանդութիւններու Մէջ»:

Ժողովին կը մասնակցէին գերազանց Ուղղափառ եւ Աւետարանական եկեղեցիներ ներկայացնող 26 եկեղեցական եւ աշխարհական ներկայացուցիչներ: Սոյն խորհրդաժողովին Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կողմէ մասնակցեցաւ Գեղարդ արդ. Քիւսպէկեան (Միջեկեղեցական Յարաբերութիւններու վարիչ-քարտուղարի օգնական):

ՄԵԾԻ ՏԱՆԸ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՅԻ ԱՍԻՍԻԻ «ԱԶՕԹՔԻ ՕՐ»ՈՒԱՆ

Հինգշաբթի, 24 Յունուար 2002ին, Ասիի մէջ տեղի պիտի ունենայ եկեղեցական յատուկ արարողութիւն՝ «Խաղաղութեան համար աղօթքի օր»ուն անիթով, վատիկանի կազմակերպութեամբ, որուն հրահանգած են հոգեւոր պետեր եւ եկեղեցիներու ներկայացուցիչներ:

Յովհաննէս Պողոս Բ. պապը յատուկ հրահանգ ուղարկած է Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսին, մասնակցելու համար «Աղօթքի Օր»ուն արարողութեան: Թանուս վեհապետ հայրապետին, իր մասնակցութիւնը պիտի բերէ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի առաջնորդ Օշական արք. Չոլոյեան:

ՊԵՐՐԻ ԲԱՅՈՒՄԸ ԿԱՏԱՐԵՅ ՀԱՐԱԻ ԱԿԱՆԱԶԵՐԾՈՒՄԻՆ ՆՈՒԻՐՈՒԾ ԽՈՐՉՐԴԱԺՈՂՈՎԻՆ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պրերի երէկ բացուեց կատարեց Հարաւի ականատեաններուն նուիրած խորհրդաժողովի մը, գործակերպած են խորհրդարանի ու ՄԱԿի բարգաւաճման ծրագրերը:

Այս առիթով արտասանուած իր խօսքին մէջ Պրերի ՄԱԿի խաղաղարար ու լեզուի առաքելութիւնը իր աւարտին չէ հասած ցարդ, եւ այդ ուժերը ցարդ չեն հաստատած ՄԱԿի թիւ 425 եւ 426 որոշումներու հիմամբ իսրայէլեան ուժերու լիբանանեան հողերին ամբողջական եւ առանց նախապայմանի հեռացումը:

Պրերի նկատել տուաւ, որ Խորայէլ կը շարունակէ լիբանանեան շրջաններու իր ուղղակի բռնագրաւումը Մագարէ՝ Երպայի եւ Քիւրուպայի բուրներուն մէջ, ինչպէս նաեւ այլ շրջաններու իր անուղղակի բռնագրաւումը, որովհետեւ իսրայէլեան ուժերու զետեղած ականատեանները լեզու են բազմաթիւ հարաւային շրջաններ:

Խորհրդարանի նախագահը նաեւ ըսաւ, որ Խորայէլ կը շարունակէ Լիբանանի գերիշխանութեան եւ օղային ու ծովային սահմաններուն ղէմ իր ոտնձգութիւնները, եւ արգելափակուած կը պահէ բազմաթիւ լիբանանցիներ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Առաջաւորաց պահի առիթով, Ծորքշաբթի, 23 Յունուար 2002ին, Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ պիտի կատարուի առաւօտեան ժամեղոցութիւն, Հայորդութեան բաշխում եւ ցորիճ:

Կը հրաւիրենք հաւատացեալ մեր ժողովուրդը, որոնք երբ օրուս ծոմապահութեան ուխտի մէջ են առաւօտեան ժամը 8:0ին:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐԸՈՐԴ Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ

ՀԱԼԵՊ ՀԱԼԵՊ ՄԱՀԱԶԴ

Տիկին Վերօնի Տէրտէրեան եւ զաւակները՝ Րաֆֆի եւ Վաչէ
Տէր եւ տիկին Համբարձում Տէրտէրեան եւ զաւակուներ
Տիկին Զուարթ Տէրտէրեան եւ զաւակուներ
Տէր եւ տիկին Կարօ Տէրտէրեան եւ զաւակուներ
Տէր եւ տիկին Յակոբ Գազանճեան եւ զաւակուներ
Տիկին Մարի Սարգիսեան եւ զաւակները՝ Գէորգ եւ Գոհար
Տիար Անգարանիկ Սարգիսեան եւ զաւակուներ
Տէր եւ տիկին Անդրանիկ Փայանճեան եւ զաւակուներ
Տէր եւ տիկին Վազգէն Ծապաղընուրեան եւ զաւակուներ
Տէր եւ տիկին Յարութիւն Քէօսէեան եւ զաւակուներ
Տէր եւ տիկին Յակոբ Մուրատեան եւ զաւակուներ
կը գումար իրենց զաւակին, եղբոր եւ հարազատին՝

ՎԻԳԵՆ ՏԵՐՏԵՐԵԱՆԻ (ԾՈՃԵԱՂ՝ ՀԱԼԵԱՅ, 1977)

մահը, որ պատահեցաւ 20 Յունուար 2002, Կիրակի առաւօտ:

Յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ 20 Յունուար 2002, Կիրակի կէսօրէ ետք ժամը 3:30ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահագոյ:

ԿԻՊՐԱԿԱՆ ՀԱՐՑ

ՔԼԵՐԻՏԵՍ - ՏԵՆՔԹԱՇ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԻԿՈՍԻԱ, 21 (ՌՈՅԹԸՐԸ).- Կիպրոսի յոյն եւ թուրք համայնքներուն ղեկավարները Երկուշաբթի օր բանակցութիւններու ձեռնարկած են կողմին 28 տարուան բաժանումին լուծում մը գտնելու առաջադրութեամբ, Ե-Միութեան կողմէ կիպրոսը անդամ ընդունելէ առաջ (հաւանաբար 2004ին):

Տեսակցութիւններու հաւանաբար լայնածիր ռաւոնտի մը առաջին ժողովին ընթացքին, Կիպրոսի նախագահ Կլաֆթոս Գլիքոսի եւ թուրք կիպրացի ղեկավար Ռաուֆ Տենքթաշ շանդիպուլու ունեցած են նիկոսիոյ լուծած մէկ օղակայանին մէջ:

Անոնք որոշած են շարաթը երեք անգամ ժողով գումարել եւ իրենց քննարկումները գաղտնի պահել լրատու աղբիւրներէ:

Դիւանագէտի մը համաձայն՝ «աշխատանքը հսկայ է: Բանակցութիւնները գոնէ մինչեւ ամառ պիտի շարունակուին»:

ՓԱՔԻՍԱՆԻ ԵՒ ՆՆԿԱՍԱՆԻ ՄԻՋԵՒ ԲԱՆՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ



Փաքիստանցի զինուորացիները կը տեղափոխուին սահմանագիծի վրայ:

Մինչ Փաքիստան վերստին կը շեշտէր, որ Հնդկաստանի հետ նոր պատերազմ մը հաւանական չէ, Քաշմիրի մէջ 21 հոգի սպանուեցաւ երէկ, իսլամական ծայրայեղականներու հետ նոր բախումի մը ընթացքին:

Հնդիկ պաշտօնատարներ յայտնեցին, որ Կոհէրուն կարգին են ուր մասնակիցներ: Ոստիկանութիւնը

ըսաւ, որ Կիւնէյալէր յարձակում գործած են իսլամներու պատկանող երեք տուններու վրայ, ուր սպանած են ութ մանուկներ երկու կիններ եւ այր մարդ մը: Այլ միջադէպի մը ընթացքին սպանուած են մնացեալներ:

Միւս կողմէ, Փաքիստանի նախագահ Փերվէշ Մուշարրաֆ ըսաւ, որ հակառակ պատերազմի ներշնչող

բոլոր երեւոյթներուն՝ տակաւին կարելի է լաւատես ըլլալ եւ յայտարարել, որ պատերազմ մը պիտի չծագի երկու երկիրներուն միջեւ: Մուշարրաֆ ըսաւ, որ կրնայ վստահեցնել, թէ քաղաքական ու փոխտրական գետնի վրայ պատերազմ մը պիտի չծագի, եթէ «խենթ» արարք մը չգործուի:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԹՈՒՐԵԱ

ՏԻԱՐՊԵՔԻՐԻ ՄԷՉ 55 ՀՈԳԻ ԿԸ ՉԵՐԲԱԿԱԼՈՒԻ

ՏԻԱՐՊԵՔԻՐ, 21 (ՌՈՅԹԸՐԸ).- Թրքական ոստիկանութիւնը հարաւարեւելեան շրջանի մայրաքաղաք Տիարպեքիրի մէջ իսլամական 55 արմատականներ ձերբակալած է, զանոնք ամբաստանելով մզկիթներէ անդամներ հաւաքելու յանցանքով, յայտնած են պաշտօնատարները, Երկուշաբթի օր:

Իշխանութիւնները ունին այն համոզումը, թէ կասկածելիները, որոնք

այս ամիս ձերբակալուած են, կը պատկանին ապօրինի Հրգպոլլա զինեալ խմբակին, որ ամբաստանուած է մեծ թիւով սպանութիւններ կատարած ըլլալու եւ երկրին աշխարհիկ կարգերը խտրական օրէնքով փոխարինելու ծրագիր մշակած ըլլալու յանցանքով:

15 կասկածելիները ամբաստանուած են արգիլեալ խմբակի մը պատկանելու յանցանքով, իսկ մնացեալները արգելակ-

ուած կը մնան: Ականատեսներ յայտնած են, թէ ոստիկանութիւնը Տիարպեքիրի մէջ ապահովութեան միջոցառումներուն թափ տուած է՝ քաղաքին ոստիկանապետին՝ Ճաֆֆար Օքթապի սպանութեան տարեգարձին նախօրեակին:

Օքթան եւ Հինգ այլ ոստիկաններ, որոնք Հրգպոլլայի ղեմ ճնշումները կը բանեցնէին, սպանուած են Յունուար 2001ին:

1994ԷՆ Ի ՎԵՐ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԸ ՕԴԱՆԱԻԵՐԸ ԹՈՒԶՔ ԿԸ ԿԱՏԱՐԵՆ ԴԷՊԻ ԱԼՃԵՐԻԱ

ՓԱՐԻՉ, 21 (ՌՈՅԹԸՐԸ).- Ֆրանսական օդանավայան ընկերութիւն մը երէկ վերսկսաւ ղէպի Ալճերիա իր թռիչքներուն, 1994էն ի վեր առաջին անգամ ըլլալով: Սոյն թուականին, «Էր Ֆրանս» օդանաւ մը առեւտրուած էր:

«Էր Լիպեքթ» օդանաւային ընկերութիւնը օրական երկու անգամ երթողորձի դրութեամբ վերսկսած է իր թռիչքներուն՝ Օրլիի օդակայանէն ղէպի Ալճերիա:

«Էր Լիպեքթ» կը յուսայ, որ այս տարուան ընթացքին ճամբորդներու թիւը հասնի 150 հազարի, իսկ մինչեւ 2003՝ 210 հազարի:

ՊՈՒԼԿԱՐԻԱ ԵՒ ՌՈՒՄԱՆԻԱ ԿՐՆԱՆ ԱՆԴԱՄԱԿՅԻԼ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՊՐԻԻՔՍԵԼ, 21 (ՌՈՅԹԸՐԸ).- Եւրոպական Միութեան Յանձնաժողովին ներքին մէկ տեղեկագիրը կ'ենթադրէ, թէ Պուլկարիա եւ Ռումանիա, որոնք անդամակցութեան համար բանակցող ամենէն աղքատ թեկնածուներն են, կրնան 2008ին պիտի անդամակցիլ, յայտնած է Երկուշաբթի օր Ե. Միութեան մէկ պաշտօնատարը:

Գաղտնի տեղեկագիրը՝ պլոքին ղէպի արեւելք ընդարձակման երկրագործական երեւոյթներուն մասին, նաեւ կը հաստատէ, թէ մեծամասնութեամբ նախկին համայնավար 10 երկիրներ յստակօրէն ընթացքի մէջ կը գտնուին 2004ին անդամակցութեան համար:

Անոնց կարգին են Կիպրոս, Չեխիա, Պալթեան երեք երկիրները, Մալթա եւ Լեհաստան:

«ՊՈՅԻՆԿ» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ ՍՏՈՐԱԳՐԵՑ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՕԴԱՆԱԻՇԻՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԵՏ

ԹԷԼ ԱԻԻԻ, 21 (ՌՈՅԹԸՐԸ).- Ամերիկեան օդանաւաշինութեան «Պոյինկ» ընկերութիւնը պայմանագրութիւն մը ստորագրեց իսրայէլեան օդանաւաշինութեան ճարտարար-ւեստի ընկերութեան հետ՝ հակամիջցամաքամասային «Արօ» հրթիռին կարգ մը բաժիններ Միացեալ Նահանգներու մէջ արտադրելու համար: Իսրայէլեան ընկերութիւնը չյայտնեց, թէ որքա՞ն պիտի վճարուի հրթիռին արտադրութեան համար:

«Պոյինկ» պիտի արտադրէ «Արօ»ի մասերուն յիսուն առ հարիւրը, մինչ իսրայէլեան ընկերութիւնը պիտի միացնէ բաժինները եւ վերջնական ձեւի մէջ պիտի դնէ հրթիռը:

ԻՐԱՔ Կ'ԱՄԲԱՍՏԱՆԵ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

ՊԱՂՏԱՏ, 21 (ՌՈՅԹԸՐԸ).- Իրաք կ'ամբաստանէ Միացեալ Նահանգներն ու Բրիտանիան՝ ՄԱԿի քարիւղի փոխարին սննդամիջոց ծրագրին գործադրութիւնը արգելակելու յանցանքով:

Արտաքին գործոց նախարարութեան կողմէ հրապարակուած յայտարարութիւն մը նշեց, որ նախարար Նաժի Սապրի Կիրակի օր հանդիպում մը ունեցաւ ՄԱԿի ծրագրի գործադիր տնօրէն Պետր Սեւանի հետ, որ Իրաք կ'այցելէ: Սապրի Սեւանի փոխանցած է, թէ ինչպիսի արգելքներ ու խոչընդոտներ կը բարձրացուին ծրագրի գործադրութեան դէմ՝ Բրիտանիոյ եւ Միացեալ Նահանգներու կողմէ: Նախարարութեան յայտարարութիւնը այլ մանրամասնութիւններ չփոխանցեց: Անիկա յայտնեց միայն, որ Սեւան խոստացած է յաւելեալ ճիգեր ու դիմել արագացնելու համար ծրագրի գործադրութիւնը:

Իրաք կ'ըսէ, որ պատժամիջոցներու յանձնարարութիւնը քրիտանացի ու ամերիկացի ներկայացուցիչներու ճնշումով կը սառեցուին միլիոնաւոր տոլարի պայմանագրութիւններ, այդ ստորագրած է Պաղտատ սննդամիջոց եւ այլ անհրաժեշտ պէտքեր ներածելու համար:

Միւս կողմէ նախագահ Սատտամ Հիւսէյն հանդիպում մը ունեցաւ իր խորհրդատուներուն հետ, քննարկելու համար ամերիկեան հաւանական յարձակումի դէմ դնելու միջոցները:

ԻՆԱ լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Սատտամ Կիրակի օր հանդիպում մը ունեցաւ Պաաս Կուսակցութեան բարձրաստիճան անդամներու, ինչպէս նաեւ՝ Յեղափոխական Հրամանատարութեան Խորհուրդին հետ, խորհրդակցելու համար կուսակցութեան ղեկավարութեան մասին, յատկապէս՝ իրաքիները հոգեպէս պատրաստելու եւ պորակոչի ենթարկելու համար:

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱՉՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԻՆՉՊԷՍ ԳՈՐԾԱԾԵԼ FUEL CARD-Ը

Չեր ինքնաշարժից պենզինի, մագնիսի, իւրից, ինչպէս նաեւ լուալու համար, վճարումից հետ միաժամանակ ցերեկայացուցէ FUEL CARD-ը, այս ձեւով ձեր մասնակցութիւնը բերած կ'ըլլաք տնտեսական ծրագիրներու յաջողութեան:



ԻՆՉՊԷՍ ՍՏԱՆԱԼ FUEL CARD-Ը

FUEL CARD-ը կրնաք ստանալ հետեւեալ կեդրոններէն.-

- ԱՅՇԼԻԻ գրասենեակ, Պուրճ Համուտ
• Համագործակցութիւն գրախանութ, Պուրճ Համուտ
• Գրատուն Caravelle, Չալքա
• Գրատուն Sava, Այնճար
• Գրատուն Կոմիտաս, Պէյրութ
• Obelix հաստատութիւն, Անթիլիաս

FUEL CARDԸ ԿՐՆԱՔ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՀԵՏԵՒԵԱԼ ԿԱՅԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՉ

- 1. CORAL JAL EL DIB, ժել էլ Տիպ
2. HYPKO ANELIAS, Կարապ Ալ Դաուարն
3. SPEED ANELIAS, Կարապիկոսարանի դիմաց
4. CORAL BAABDAT, Պապապոթ մայրուղի
5. SPEED ACHRAFIEH, էլ Նաիր PEUGEOT ընկ. առաջ
6. HYPKO HAMRA, Պանց Տի Լիպանց առաջ
7. MEDCO KARANTINA, Զարաթիմայի մայրուղի
8. CORAL BHAMDOUN, Դամասկոսի մայրուղի
9. CORAL MAR MIKHAEL, Մար Սիլայել, Սատա պողոտայ
10. SPEED ALITTIHAD, Կալերի Իթիհատ
11. MANAR FANAR, Ֆանար, Նաաթր պանդոկին կից
12. CALTEX ANJAR, Այնճար
13. BASSIL DORA, Տորայի կամուրջ
14. ԱՅՇԼԻԻ ԿԱՅԱՐԱՆ, Տորա, «Ալմագա»ի կից
15. ԱՐԳԻՍԵԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Պուրճ Համուտ, Սիլ էլ Ֆիլի մայր պողոտայ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

Մագնիսի սպասարկութեան համար հեռաձայնել՝ 04-715111, 04-715222 եւ 04-715333 թիւերուն:

ՔՐՏԸ ԿԸ ՍՏԱՆԱՔ ՉՐԻՕՐԵԼ ԱՐԾԷՔՍԻՐ ՆՈՒԷՐՆԵՐ ԵՒ ԻՆՔՆԱՇԱՐՔ ՄԸ

ԵԳԻՊՏՈՍԲՆԱԿԱՆ ԿԱԶ ՊԻՏԻ ՀԱՅԹԱՅԹԷ ՖՐԱՆՍԱՅԻ

ԳԱՏԻՐԷ, 21 (ՌՈՅԹԸՐԸ).- Եգիպտոս Երկուշաբթի օր եւրոպական կազմի շուկային մէջ աշխարհամիջայլ քայլ մը առաւ, երբ Ֆրանսայի հետ կնքեց 20 փարուան համաձայնագիր մը, որուն հիմամբ Եգիպտոս բնական կազմի արտադրութիւնը ֆրանսայի:

Ֆրանսայի կազմի ղեկավար ընկերութիւնը «Կազ փր Ֆրանս» համաձայնութիւն մը կնքեց Եգիպտոսի Ընդհանուր Քարիւղի ընկերութեան եւ Եգիպտական Բնական կազի հասարակութեան հետ, որուն համաձայն՝ 2005էն սկսեալ փարեկան 3,6 միլիոն թոն բնական կազ միջառարկայով Եգիպտոսէն դէպի Ֆրանսա, 20 փարուան փետրուրեամբ:

Պաշտօնատարներ յայտնեցին, որ այսպիսով Ֆրանսա ուրիշ կարեւոր առաւելութիւն իր բնական կազի կարիքին փութը առ հարիւրը:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Երկուշաբթի, 14 Յունուար 2002ին Չղարթ մահացած

ԿԱՐԱՊԵՏ ՄԿՐՏԻՉ ԹՈՓԱԼԵԱՆԻ

հոգիին համար պիտի մատուցուի Ս. պատարագ եւ պիտի կատարուի հոգեհանգստեան պաշտօն:

Պիտի պատարագ՝ ԳԵՐՊԾ. Հ. ՎԱՐԴԱՆ ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆ

Պիտի քարոզ՝ ԳԵՐՊԾ. Տ. ԳԷՈՐԳ Թ. Մ. Վ. ԵՂԻԱՅԵԱՆ

Կիրակի, 27 Յունուար 2002, ժամը 11:00ին, Հազմի, Միսթարեան վարժարանի «Ս. Աստուածածին» մատրան մէջ:

Իրենց հոր վախճանումին՝ գերպտ. Շ. Յովսէփ վրդ. Թոփալեան եւ գերպտ. Շ. Մետրոպ վրդ. Թոփալեան ցաւակցութիւնները կ'ընդունին իրենց վարժարանի մէջ՝ Կիրակի, ժամը 12:00էն 13:30 եւ երեկոյեան 5:00էն 8:00, Երկուշաբթի, 28 Յունուար 2002, ժամը 10:00էն 13:00 եւ երեկոյեան 5:00էն 8:00:

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

ՄԵՌՏԱԿԱՆ ԱՐԱՔԻՈՅ ՀԵՏ ԹՈՒՐՔԻՈՅ ՎԵՃԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԿՐՆԱՅ ՇԱՀԱԻԷՏ ԲԼԼԱԼ

Ամերիկացի իրենց բարեկամներուն բաջայինները եւ զօրակցութիւնը վայելելով՝ թուրք պաշտօնատարներ ի վերջոյ շատ առաջ գացած են Միջին Արեւելքի մէջ չփացած մանուկ իրենց վարուելակերպին մէջ: Անտեսելով երկրին տնտեսական սնանկութիւնը, իր քաղաքացիներուն մարդկային իրաւանց մեծ խախտումները, հայերու, յոյներու, ասորիներու եւ քրիտոնու հանդէպ գործուած ցեղասպանութիւնը, Հիւսիսային Կիպրոսի շարունակուող բռնագրաւումը եւ իր դրացիներու մեծ մասին հետ թշնամական յարաբերութիւնները, թուրքիա դարձած է կապանքներէ արձակուած հրէշ մը:

Թուրքերը այժմ վճռած են հարց ստեղծել իրենց սահմաններէն շատ հեռու գտնուող Մէնուտական Արաբիոյ հետ: Տագնապը սկսաւ, երբ սէնուտական կառավարութիւնը յայտարարեց, թէ կը ծրագրէ տեղափոխել Մեքքէի մէջ գտնուող թմրոց մը՝ տեղ բանալու համար 533 միլիոն տոյար արծող համալիրի մը, որ բաղկացած է բնակութեան 11 բարձր շէնքերէ, շքեղ պանդոկէ եւ վաճառատներու կեդրոնէ մը: Թուրքական կառավարութիւնը սէնուտական զգուշացուց դպչելէ ինքնաւարտութիւն, որ ցեղով շինուած անհրաժեշտ կառուց մըն է եւ 200 տարի առաջ կառուցուած է օսմանդներու կողմէ, երբ անոնք գրաւած են Արաբիան: Մէնուտացի երբ վար առին այս անպէտք կառուցը եւ հակադիմացի թուրքական անարդարանալի միջամտութեան իրենց ներքին գործերուն, թուրքերը լիտիացան:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Իսմայիլ Ճէմ սէնուտական քայլը անամթաքար որակեց «մշակութային ցեղասպանութիւն»: Երեւակայնցէ՛ք. բոլոր ժողովուրդներուն մէջ թուրքերը յանդգնութիւնը կ'ունենան իսլամիզմով մը ցեղասպանութեամբ մեղադրելու: Իսթեմբուլի «Թաշար» թուրքիոյ մշակութի նախարարը՝ շահագործելով Արեւմուտքի մէջ գոյութիւն ունեցող հակաթաշարական տրամադրութիւնները, զուգահեռներ գծեց ինքնատի տեղափոխման եւ Աֆղանիստանի մէջ Պուտտայի վիթխարի արձաններուն թալիպաններու կողմէ ուժահարման միջոց: «Ասիական մարդկութեան դէմ ոճիր մըն է, եւ ՅՈՒՆԵՍԿՕ պէտք է պարզէ այս անպատուաբեր, տգեղ քայլը եւ մշակութային ջրաղբ», ըսաւ նախարարը:

Թուրքիոյ խորհրդարանի փոխ նախագահ Մուրատ Սոքմէնսողու ըսաւ. «Իսլամ երկրի մը կողմէ այլ իսլամ երկրի մը պատմական աւանդին քանդումը սուրէ հողին վրայ, մեղադրելի արարք մըն է, որ կը խախտէ իսլամութեան բարոյական արժէքները»: Մայր Հայրենիք Կուսակցութեան փոխ նախագահ Պիւլէն Ֆաքրաբաշի առաջարկեց «պատժել հեղինակը այս ոճիրին», որ գործուած է պետական տրամաբանութեամբ: Փորձելով վարկաբեկել սէնուտական իշխանութիւնը՝ Աբաբաշի իրականութեան մէջ վարկաբեկեց բոլոր արարքները, որովհետեւ պետելիները ազնուական աւանդ ունին արաբական մշակոյթին մէջ:

«Լուս Անհեյրա թայմը» հաղորդեց, որ 12 Յունուարին ինքնաւարտ ամրոցի տեղափոխման դէմ Անգա-

րայի մէջ բողոքի հաւաքի մը ընթացքին ցուցարարներ այրած են Մէնուտական Արաբիոյ թագաւորին պատկերը: «Մէնուտցիներուն պիտի ստիպեմք վճարել իրենց արարքին գինը», գոռացած են թուրք ցուցարարները: Անոնք Ֆաստ թագաւորը կոչած են «անհաւատ» եւ գայն պատկերած են իրբեւ սատանայ: Յուցարարները նաեւ պարգած են պատաններ, ուր գրուած է. «Ֆաստ թագաւոր՝ Ուսամա Պըն Լատէն» եւ՝ «Անկցի՛ սէնուտական բռնատիրութիւնը»: Թուրքական ճամբորդական ընկերութիւններ յայտարարեցին, որ միջազգային մարմիններու մօտ պիտի բողոքեն Մէնուտական Արաբիոյ կատարած «մշակութային ջրաղին» դէմ:

Մէնուտական հակադարձութիւնը նոյնքան բուռն եղաւ: Մէնուտական Արաբիոյ իսլամական հարցերու նախարարը՝ Սալիհ Պըն Ապտէլ Ազիզ Պըն Մոհամէտ Ալ Շէյխ յայտարարեց. «Մէնուտական Արաբիա կը գործէ իր ինքնիշխան իրաւունքներուն համաձայն եւ ոչ մէկուն արտօնուած է միջամտել երկրին ներքին գործերուն: Ինքնաւարտ, կառուցուած խիճէ եւ ցեղին, շինուած չէ երկար ժամանակ կանգուն մնալու համար: Անոր վերակառուցումը գայն պահպանելու միջոց մըն է», ըսաւ ան: Մէնուտական թերթերը նոյնիսկ աւելի զայրացան: Արաբատառ «Օրպա» օրաթերթը քննադատեց իսլամական աւանդներէն եւ նկարագրէին հրաժարելու թուրքիոյ ուղեգիծը: Ան թուրքիան նկարագրեց իրբեւ «վերջին երկիրը, որ իրաւունք ունի խօսելու իսլամական կամ մարդկային աւանդներու պահպանման մասին»:

Մէնուտական այլ կարեւոր թերթ մը մէջբերեց ԵՌՆԵՍԿՕ-ի մէկ պաշտօնատարին խօսքը. «Եթէ թուրքիա ինքզինք օսմանցներու ժառանգորդ կը նկատէ, սպանն պատասխանատուութիւն պէտք է վերցնէ օսմանեան իշխանութեան ընթացքին կատարուած բոլոր շարժումներուն համար, ներառեալ՝ Հայկական Յեղասպանութեան եւ մարդկութեան դէմ գործած միւս բոլոր ոճիրներուն»: Այլ խօսքով, եթէ այսօրուստ թուրքերը ժառանգորդներն են օսմանեան կայուններուն, ապա նաեւ ժառանգորդն են անոնց պարտքերուն:

Թուրքիոյ եւ Մէնուտական Արաբիոյ միջեւ վեճի շարունակման պարագային, սէնուտցիք քաղաքական եւ տնտեսական լուրջ հարցում կրնան հացնել թուրքիոյ՝ դիմելով հետեւեալ քայլերուն.

- 1) Մէնուտցի հազարաւոր հարուստ գրօսաշրջիկներ կրնան պոյրքով ինքնակեղ թուրքիան՝ աւելի եւս սրելով երկրին տնտեսական տագնապը:
- 2) Մէնուտցիներ կրնան ջնջել միլիառաւոր տոյարի հասնող իրենց ներդրումները թուրքական ընկերութիւններու մէջ:
- 3) Անոնք կրնան արգիլել թուրքական հաստատուութիւններուն՝ Մէնուտական Արաբիոյ մէջ շահաբեր գործունէութիւն ունենալ:
- 4) Անոնք կրնան արգիլել թուրքական արտադրութիւններու Մէնուտական Արաբիա ներածումը:
- 5) Մէնուտցիները կրնան դէմ քուէարկել Թուրքիոյ շահերուն ծառայող ծրագրիներուն՝ ՄԱԿի եւ Արաբական Լիգային մէջ:
- 6) Անոնք իսլամական Պետութիւններու խորհրդածողովէն կրնան պահանջել դատապարտել Իսրայէլի հետ թուրքիոյ դաշնակցութիւնը:
- 7) Մէնուտական կառավարութիւնը կրնայ ճանչնալ Հայկական Յեղասպանութիւնը՝ հետեւելով 1917ին Տարիֆ Մեքքէի յայտարարութեան:

Շմեցնուցիչ է, որ թուրքիա կը յանդգնի մշակութային կոթողներու պահպանման մասին դասեր տալ այլ երկիրներու: Թուրքական կառավարութիւնը հետեւողական եւ ծրագրուած ձեւով ոչնչացուցած է հայկական հազարաւոր եկեղեցիներ եւ կոթողներ՝ ջնջելու համար թուրքիոյ կողմէ բռնագրաւուած հողերուն վրայ բնակած հայերու բոլոր հետեւերը: Այսուհանդերձ, այն վարկեանին, երբ մէկը կը դպչի թուրքական ցեղակերտ խրճիթի մը, թուրքերը ընդոտ կը վերածուին մշակոյթի պահպանողներու: Ապակեայ բնակարաններուն մէջ ընկող մարդիկ պէտք չէ քարկոծեն զիրար: Ոչնչացուցած եւ սառնասրտօքն ջրաղած ըլլալով միլիոնաւոր մարդիկ՝ թուրքերը քաղաքակրթ աշխարհի ծաղրանքի առարկան կը դառնան, երբ կը դրսեւորեն մշակոյթի հանդէպ իրենց սէրը: Թուրք առաջնորդներ թող նշոյլ մը նախանձախնդրութիւն ցուցաբերեն մարդոց կեանքներուն հանդէպ՝ նախքան ցեղի կոյտի մը վրայ կոկորդիլոսի արցունքներ թափելը:

ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ

«Քալիֆորնիա Գուրիլը»

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՌԵՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»-ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագային՝ ցանկընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազդակ»-ի ծանուցումներու գրասենեակը:

«ՀԱՅԵ՛Ր, Ի՞ՆՁ Կ'ՈՒՉԻՖ ԾԵՂԱՍՊՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԻՆ»

ՀԱՐՑ ԿՈՒ ՏԱՅ «ՀԻՒՐԻԷԹ»-Ի ԼՐԱԳՐՈՂԸ

Անցեալ շաբաթ Երբեմնի Մամուլ Ակումբին հրահանգով թուրք 4 լրագրողներ այցելեցին Հայաստան եւ Լեւոնային Ղարաբաղ, ուր հանդիպում մը ունեցան նախագահ Արկաղի Ղուկասեանի հետ:

Հայաստանի մէջ լրագրողները այցելեցին բարձրաստիճան պաշտօնատարներու, սակայն նախագահ Ռուպէլթի Բոչարեան մերժեց ընդունելի գանձնք:

«Արմէնփրէս»-ի թղթակիցը այս առիթով գրոյց մը ունեցաւ չորս լրագրողներէն՝ «Հիւրի»-ի թերթի աշխատակից Ֆերայ թինճի հետ:

Հայկական Յեղասպանութեան մասին «Արմէնփրէս»-ի հարցումներէն նեղի մատնուելով՝ «Հիւրի»-ի թղթակիցը իր կարգին սկսաւ հարցեր ներկայացնել: Ան հարց տուաւ, որ թուրքիոյ կողմէ Յեղասպանութեան ճանաչումը ի՞նչ պիտի փոխէ հայերու կեանքին մէջ: «Ի՞նչ կ'ուզէ Հայաստանը այդ մէկէն, հողը»: Չլրջ դարձ համար այդ մէկը նախկին կեցուածք է, որ տեղ չունի նոր ժամանակներու զարգացմանը: Երբ ի՞նչ կ'ուզէք դրամ», հատուցումը արդեօք այդ մէկը վայել է հայու հպարտութեան», յայտնած է թուրք լրագրողուհին:

Ֆ. թինճ ըսած է, թէ աշխարհի զանազան երկիրներու կողմէ Հայկական Յեղասպանութեան ճանաչումը թուրքերու մէջ հայ ժողովուրդին նկատմամբ թշնամութիւն կը սերմանէ: Ան սեղիցուցած է, որ տնտեսական զարգացած յատկութիւնները շատ աւելի դիւրութեամբ կը լուծեն հարցերը: Ըստ թուրք թղթակիցին, միայն պատմութիւնը կարողով երկիրները չեն զարգանար եւ ժամանակ կը կորսնցնեն: «Հայաստանի մէջ կարծես միայն պատմութեան կանգն է: Աշխարհը այսօր բարձր արհեստագիտութեամբ կը զարգանայ, իսկ մենք միայն պատմութեան գիրքեր կը կարդանք», ըսած է Ֆ. թինճ: Ան կոչուողով է մէկ կողմ դնել պատմութիւնը եւ նայել ապագային, որովհետեւ «մեզի համար ան է կարեւորը»:

Ինչ կը վերաբերի Օսմանեան կայսրութեան հայերուն, թուրք թղթակիցը գանձնք «դաւաճաններ» նկատած է, որովհետեւ անոնք «ուսուրիներ» են կը գործակցէին»: «Ես չեմ ուզեր այդ պիտակը տալ մեր դրացի հայերուն, քանի որ այսօր թուրքիոյ հայերը մեր հաւաքականութեան արժանի մէկ մասնիկն են եւ թերթերէն կարողով, թէ ինչն է յեղասպանութեան ճանաչումը, շատ գէշ կը զգան», աւելցուցած է ան:

Ապա թուրք թղթակիցը անդադարձած է հատուցման եւ պահանջատիրութեան եւ հայերու ըրողութեան երկպառակցութեան նկատմանը:

Մերձաւոր Արեւելքէն ժամանակին վտարուած թուրքերու հետ, որոնք «նոյնպէս ոչինչ ստացան»: «Կարեւոր է մտածել ապագայ սերունդներուն մասին: Մենք պէտք է բանանք սահմանները այդ մէկը մեծ կարեւորութիւններ կը ստեղծէ հայերուն, որոնք շատ աւելի լաւ կը թուած են՝ շրջանին մէջ գորաւոր դառնալու եւ ֆինանսական ու տնտեսական ազդեցիկ լծակներու տիրելու», դիտել տուած է թինճ:

ՀԱՅԿԱԿԱՆ «ՈՏՆԱԳՈՒԹԻՒՆ»ՆԵՐՈՒ ԳԵՄ ԳՈՐԾԱԿՅՈՒԹԻՒՆ

Թուրք չորս լրագրողներէն այլ լրագրող մը Երեւանի մասին իր կարգին, «Արմինֆօ» լրատու գործակալութեան ղեկավարը:

ՌՈՒՍԱԿԱՆ ԽԱՐՈՍԻՒ ԲԱՎՈՒՄԵՆ ԱՌԱՋ ԱԽԱՎՔԱԿԱՆ ՀԱՄԱՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԻ ՄԸ ՄՇԱԿՈՒՄԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ

Վրաստանի պաշտպանութեան փոխ նախարար Կեյա Պեգոնշվիլիի *ուսական «Վրեմյա Նովոսթի Տէյի» թերթին վերջերս յայտնած է, թէ կարելի չէ խօսիլ Ախալքալաքի ուսական գիճուորական խարխալ փակելու մասին ցանկաց տնտեսական ծրագրի մը մշակելը: Նշելով, որ Ախալքալաքի հայութեան պարտաւոր կախել է ուսական խարխալին, փոխ նախարարը աւելցուցած է. «Երբ անոք (բնակիչները - Ա.՝) զգան պետութեան հոգատարութիւնը եւ ցուցաբերած ուշադրութիւնը, շատ աւելի դիւրին ձեւով պիտի ընդունին գիճուորական խարխալ փակելու որոշումը»:

ԱՂՐՊԷՅՃԱՆԻ ՄԷՉ ԹՈՒՐՔԻՈՅ ԴԵՍՊՈՒՆ ԿԸ ԿԱՏԱՐԷ ՃՇԴՈՒՄՆԵՐ

Ազրպայճանի մէջ թուրքիոյ դեսպան Ունայ Չեւերոզ վերջերս «Թուրք» լրատու գործակալութեան հետ հարցազրոյցի մը ընթացքին յայտնեց, որ ազրպայճանական լրատու կարգ մը միջոցներու կողմէ շրջանառութեան մէջ գրուած այն լուրը, թէ Երևանի Միւլթիլինը որոշած է կողակաւ դնել թուրքիոյ ազդեցութեան ծիրէն ներս, չափազանցուած է: Ան չափազանցուած նկատեց նաեւ այն տեղեկութիւնները, ըստ որոնց, թուրքական ուժեր հիմնաբար պիտի կազմեն Երևանական Միւլթիլինը կողմէ ստեղծուելիք 100 հազար զինուորային, եւ թէ թուրքիա որոշելի խօսք պիտի ունենայ կողակաւ տագնապներու լուծման համար այդ ուժին գործածութեան մէջ:

Իր տեղեկութիւնները թուրքական կառավարական շրջանակներէ քաղելով՝ ազրպայճանական «Էյ. Էն. Էս.» հեռատեսիլի կայանը 9 Յունուարին յայտարարած է, թէ Երևանական Միւլթիլինը որոշած է կողակաւ դնել թուրքիոյ ազդեցութեան ծիրէն ներս: «Էյ. Էն. Էս.» այս լուրը նկատած էր «վերջին տասնամեակի ամէնէն զգալցուն լուրերէն մէկը»: Ըստ «Էյ. Էն. Էս.»-ին, երրորդային բարձրաստիճան պաշտօնատարներ այդ քայլը կարեւոր նկատած են Արեւելքը Երևանային կամրջելու համար: Նոյն տեղեկատուութեան մէջ յիշուած է, թէ Երևանական Միւլթիլինը բանակը գործողութիւններու պիտի ձեռնարկէ միայն Անգարայի արտօնութիւնը ստանալէ ետք:

www.hamazkayin.com

ՀԱՍԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍՑԵՆ
HAMPIG SASSOUNIAN
 CSP - L.A.C. B - 5 - 131 44750
 60-TH ST. WEST LANCASTER,
 CA, 93536 - USA

ԶԱԼԻՖՈՐՆԻԱ
ԴԵՍՊՈՒՆ ՕՐՏՈՒՅՅ Կ'ԱՆԴՐԱԴԱՌՆԱՅ ՀԱՅԿԱԿԱՆ ԾԵՂԱՍՊՊԱՆՈՒԹԵԱՆ

Քալիֆորնիոյ համալսարանին կողմէ իրեն ի պատիւ տրուած ճաշկերպի մը ընթացքին, Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու Նոր Եղեռնութեան դեսպան ձոն Օրտուէյ 15 Յունուարին յայտարարեց, որ Քոնկրէսը չի ծրագրեր մօտ օրէն ճանջնալ Հայկական Յեղասպանութիւնը, որովհետեւ այդ մէկը կրնայ վնասել Թուրքիոյ հետ իր յարաբերութիւններուն:
 Ճաշկերպի ընթացքին խօսք առաւ նաեւ վրոնթ. Ռիչըրտ Յովհաննէսեան, որ պատասխանեց դեսպանին՝ ըսելով, թէ Յեղասպանութիւնը չհանգնուի միայն Նահանգներ ոչ միայն վիրատարած կ'ըլլան հայութիւնը, այլ նաեւ այդ հանգամանքը ժխտական հետեւեալներ կ'ունենայ Թուրքիոյ համար:
 Օրտուէյ Հայկական Յեղասպանութեան անդրադարձաւ նաեւ Նոյն օրը կէսօրէ ետք կլնեցելի մէջ տեղի ունեցած մամուլային ասուլիսի մը ընթացքին: Ան չչստակացուց, թէ իր կառավարութիւնը կը ծրագրէ՞ Հայկական Յեղասպանութիւնը ճանջնալ, թէ ոչ. սակայն ան շեշտեց, որ պէտք է դիմագրաւել Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւններու բարելաման հարցը: «Կը հաւատանք, որ պէտք է այդ հարցով զբաղիք զգուշութեամբ եւ մտադիր ենք այդ մէկը ընելու», ըսաւ դեսպանը:
 Ինչ կը վերաբերի Լեւոնային Ղարաբաղի հարցին, Օրտուէյ անհաւանական գտաւ պատերազմին վերսկսելը, որովհետեւ, ըստ իրեն, Ազրպայճան ի վիճակի չէ նման քայլի դիմելու: «Յարձակումներու վերսկսումը անտրամաբանական պիտի ըլլայ եւ ժխտական հետեւեալներ պիտի ունենայ Ազրպայճանի մասին եւ ԱՄԷԿ Միւլթիլինը խմբակն եւ միջազգային համայնքի կարծիքին վրայ», շեշտեց դեսպանը:

ԱՍՏԴԱԳԻՏԱԿԱՆ

ԱՆՋՐՊԵՏԻՆ ԳՈՅՆԸ ԲԱՅ ԿԱՆԱՉ

Անջրպետը բաց կանաչ է, ըստ աստղագետների: Սակայն ոչ պարզ կանաչ, կ'ըստ աստղագետ Իվան Պոլտրի, որ աշխատած է գտնելու համար անջրպետի բոլոր լոյսերուն միջին գոյնը: Անիկա բաց «թիր-քուազ» է, որ անշուշտ կանաչ-կապույտ է, կը յայտնէ ան՝ աւելցնելով, որ գոյնը քիչ մը աւելի կանաչ է, քան կապույտ: Պոլտրի եւ անոր գործակիցները անջրպետին գոյնը գտած են 200 հազար աստղաճոյլերու ուսումնասիրութեան մը

Գիտնականները կը շնորհակալեն, որ որեւէ միջոց չկայ այդ գոյնը երկրագունդէն տեսնելու: Պոլտրի (Մէրի-լենտ) ձոնը Հոփքինգհա-մայսարանին գիտնականներէն Պոլտրի, կ'ըսէ, թէ զայն տեսնելու միակ ձեւը պիտի ըլլար, «եթէ տեսնէիք ամբողջ անջրպետը նոյն հեռավորութեան վրայ, անշարժ վիճակի մէջ»: Այդ «թիրքուազ» գոյնը կը գտնուի գիտնականներուն կողմէ ստեղծուած անջրպետային լուսապատկերի մը

լուսապատկերին մտաւորապէս մէջտեղը՝ գոյնի իմաստով, թէեւ Պոլտրի չի գիտեր, թէ ո՛ւր կը գտնուինք անջրպետի կեանքի տեւողութեան իմաստով: Գոյնը ի վերջոյ պիտի փոխուի կարմիրի, երբ աւելի տարեց աստղերը կարծիք հսկանքը դառնան եւ աւելի փոքր թիւով նոր աստղեր ծնին:



Ճերմակ-կապոյտ նորածին աստղերու փայլուն «հանգոյցներ»:

ըլլան, այսինքն՝ տաք, մը միլիառ տարիներու նորածին աստղեր՝ նախ-ընթացքին, ապա սկսած է

ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՅՔԻ ՄԵՉ ՏԵՍՆՈՒԱԾ ԱՍՏՂ ՄԸ

Աստղագետներ յաջողած են առաջին անգամ ըլլալով «տեսնել» աստղ մը՝ անոր կեանքին կարճատեւ մէկ ժամանակամիջոցին, երբ ան կը փոխուի այսպէս կոչուած մոլորակային միգամածութեան մը փայլող կազի պղպջակ մը, որ կը շրջապատէ աստղին տաք մնացորդը: Մասնագետներու ցախատեսութեամբ, մեր արեւը օր մը անս ձեւով փոփոխութեան պիտի ենթարկուի, հաւանաբար այդ ընթացքին քանդելով երկրագունդը: Իրենց կեանքին վերջաւորութեան արեւուն նման աստղեր դեպի անջրպետի կազ կ'արձակեն՝ իրենց իսկ ձգողական ուժին պատճառով կծկուելով եւ դառնալով ներմակ, փոքր աստղեր: Այդ կծկումը աստղին շերտաստիճանը կը բարձրացնէ՝ գայն մղելով, որ դեպի դուրս անդրմանիշակազոյն լոյս արձակէ: Այդ լոյսը ցախապէս արձակուած կազի մոլեքուլները կը մղէ, որ փայլին: Փայլող կազը կրնայ գեղեցիկ ձեւեր ստանալ: Այսուհանդերձ, երբ աստղի մնացորդը բաւարար կը տաքնայ անորմանիշակազոյն լոյս արտադրելու համար, կազին մոլեքուլները կը քանդուին, ինչ որ կը նշանակէ, թէ այս ժամանակամիջոցը կարճատեւ է: Մոլորակային միգամածութիւնը, որ «Գոյ 3-35» կոչուած է, նոր սկսած է փոփոխութեան, ինչ որ կը նշանակէ, թէ այժմ «գիտաշխատանք մը ունինք» դիտելու համար յառաջիկայ քանի մը տարիներուն ցայտագրութեամբ, կ'ըսէ Լուիս Միլրանտա, որ Կրանտայի (Սպանիա) Անտալուսիա Աստղադիտարանի գիտնական է:



Անջրպետը՝ «Հապըլ»ի կողմէ դիտուած. կան միլիառաւոր աստղաճոյլեր:

ընթացքին, որ պիտի ծառայէր ճշդելու համար աստղերու ծնունդին համաժամանակները՝ անջրպետին թաւալող կեանքին ընթացքին: Աստղագետներուն մեծամասնութեան կարծիքով, աստղերու կազմութեան ընթացքը տկարացած է սկզբնական արագ ընթացքէն ետք: Գիտնականները ուսումնասիրած են երկրագունդին 2 միլիառէն 3 միլիառ լոյս-տարի հեռավորութեան վրայ գտնուող աւելի քան 200 հազար աստղաճոյլեր (1 լոյս-տարին շուրջ 10 թրիլիոն քիլոմէթրի կը համապատասխանէ): Տարբեր աստղաճոյլերու գոյներուն թուական արժեքներ տալով, գաւնոնք գիտնականները եւ անոնց միջինը գտնելով՝ կարելի եղած է հասնիլ բաց կանաչ գոյնի մը:

մէջտեղը: Այդ լուսապատկերը ցոյց կու տայ անջրպետը, որ կը սկսի կապոյտ ժամանակաշրջանով մը, որ կ'անցնի կանաչէն եւ ի վերջոյ կը դառնայ կարմիր: Պոլտրի կը բացատրէ, թէ նկատի ունենալով, որ երիտասարդ նոր աստղեր չկան, անջրպետը հետզհետէ կարմիր պիտի դառնայ: Անիկա կապոյտ սկսած է, նկատի ունենալով, որ լոյսին կը տիրապետեն տաք աստղեր, կ'ըսէ ան: Տրուած ըլլալով, որ երիտասարդ աստղերը տաք եւ կապոյտ են, անոնք կը տիրապետեն լոյսին, կը յայտնէ ան՝ աւելցնելով, որ միայն երբ երիտասարդ աստղերուն թիւը նուազի, գոյնի փոփոխութիւն տեղի կ'ունենայ: Ներկայիս կը զբտնուինք անջրպետային

ԵՐԿՈՒ ԱՍՏԵՂԱԿԵՐՊԵՐ ԵՐԿՐԱԳՈՒՆԴԻՆ ՄՕՏԷՆ Կ'ԱՆՑՆԻՆ

Երկու աստղակերպեր անցնալ շաբաթ երկրագունդին մօտէն անցած են, եւ կան աւելուած չինդ ուրիշներ, որոնք մինչեւ Յունուարի վերջը պիտի մօտենան մեր մոլորակին, սակայն անոնցմէ ոչ մէկը հոյամողէզներ կը սպաննէ, կ'ըսեն գիտնականներ, որոնք զանոնք կը հետապնդեն: Անցեալ Չորեքշաբթի օր երկրագունդին մօտեցած աստղակերպերէն մէկը 1 քիլոմէթրէն 3 քիլոմէթր տրամագիծ ունեցած է, ինչ որ բաւարար մեծ կը նկատուի աղէտ մը պատճառելու համար, եթէ երկրագունդին բախի: Սակայն «7341 1991 Վի. Բէյ.» աստղակերպը 11 միլիոն քիլոմէթրէն աւելի չէ մօտեցած, ինչ որ երկրագունդը - լուսին հեռավորութեան շուրջ 24 անգամն է:




«2001 Ուայ. Պի. 5» աստղակերպը, որ կ'երեւի սլաքին միջոցով, կրնար Ֆրանսայի մեծուրբամբ երկիր մը անհետացնել, ըստ քրիստոնացի գիտնականի մը:

Միւս աստղակերպը՝ «2002 էյ. Օ. 11», աւելի մօտեցած է, շուրջ 4,8 միլիոն քիլոմէթր, թէեւ անիկա համեմատաբար աւելի փոքր եղած է՝ 75 մէթր լայնքով եւ երկրագունդին վտանգ չէ սպառնացած: Շաբաթ մը առաջ «2001 Ուայ Պի. 5» աստղակերպը, որ 305 մէթր լայնքով աստղակերպ մըն է, երկրագունդին մինչեւ 804,700 քմ. մօտեցած է: Աստղագետները գայն նկատած են ամիս մը առաջ միայն: ՆԱՍԱի գիտնականներէն Տոն Եոմընգ կ'ըսէ, թէ հաւանականութիւն չկար, որ անիկա բախէր երկրագունդին, սակայն ասիկա «ընտելեան արթննալու կոչն է», որ կը յայտնէ, թէ անջրպետին մէջ բազմաթիւ աստղակերպեր կան եւ պէտք է ուշադիր ըլլալ: Եոմընգ պարտականութիւնն է երկրագունդին մօտեցող աստղակերպերուն ծիրերը գտնել՝ անոնց տեսնուելէն ետք:

ԱՆՋՐՊԵՏԱՅԻՆ 564 ՄԵԾ ԺԱՅՈՒՆ


ՆԱՍԱի մէկ ծրագիրը կը զբաղի 1 քիլոմէթր կամ աւելի լայնք ունեցող աստղակերպերով, որոնք կարելիութիւնը ունին բախուի երկրագունդին եւ աղէտ պատճառելու: Գոյուցիւն ունեցող շուրջ 1200 մեծ ու վտանգաւոր աստղակերպեր են գիտնականներ գտած են 564ը: Անոնց մեծամասնութիւնը՝ 471ը գտնուած է 1990էն ետք: Ըստ նշեալ ծրագրին զխաւոր գիտնականներէն Միլիք Փրաւտոյի, կայ աւելուած մէկ աստղակերպ՝ «2001 Օ. ձի. 108», որ 11,3 քիլոմէթր տրամագիծ մը ունի եւ կրնայ հոյամողէզ սպաննելու չափ ըլլալ: Բազմաթիւ գիտնականներու կարծիքով, թերեւս 5 քիլոմէթր լայնքով աստղակերպ մը բնաջնջած է հոյամողէզները եւ այլ տեսակի ալիքայիններ, երբ բախած է երկրագունդին 65 միլիոն տարի առաջ: Փրաւտո կ'ըսէ, թէ «2001 Օ. ձի. 108» մօտեցող աստղակերպը, որովհետեւ նախատեսելի ապագային անիկա հաւանականութիւն չունի երկրագունդին մօտենալու: Կը նախատեսուի, որ 2027 թուականին «1999 էյ. Էյ. 10» աստղակերպը «2001 Ուայ. Պի. 5» աստղակերպին աւելի եւս մօտենայ երկրագունդին: Սակայն գտնելէ ետք անոր ծիրը, գիտնականներ կ'ըսեն, թէ անիկա որեւէ վտանգ չի սպառնար: Աւելի ուշ որեւէ աստղակերպ կրնայ վտանգ սպառնալ մոլորակին, մասնաւոր կը կան տակաւին «չուքի մէջ պահուած ժայռեր», որոնք չեն նկատուած, կը զգուշացնեն աստղագետները: Բրիտանացի աստղագետ Պենի Փէյլըր յատկապէս մտահոգ է, որովհետեւ գիտնականներ «2001 Ուայ. Պի. 5»-ը Դեկտեմբերի սկիզբներուն միայն նկատած են: Իսկ եթէ անիկա բախուի ընթացքին մէջ ըլլա՞ր, հարց կու տայ ան: Փէյլըր կ'ըսէ, թէ մէկ ամիսը բաւարար ժամանակ չի տար աստղակերպին ընթացքը փոխելու որեւէ նախաձեռնութեան: Աստղակերպի մը պատճառով մահանալու հաւանականութիւնը գրեթէ նման է ճամբորդատար օդանաւի մը օդաչափին զոհ երթալու հաւանականութեան, ոչ թէ որովհետեւ աստղակերպի ծանրակշիռ բախումներ սովորական են, այլ՝ որովհետեւ անոնց ազդեցութիւնը կրնայ շատ մեծ տարողութիւն ունենալ: Ամէնէն ծանրակշիռ բախումներ կրնան կլիմայական ընդհանրական փոփոխութիւն պատճառել՝ դէպի երկինք բարձրացնելով բեկորներու ամպ մը, որ կրնայ ի վերջոյ ջերմաստիճանները նուազեցնել եւ բոյսեր, անասուններ եւ մարդիկ սպաննել: Նման բախումներ տեղի կ'ունենան թերեւս իւրաքանչիւր 100 հազար տարին անգամ մը:



Արուեստագետի երեւակայութեամբ, մահացու աստղակերպ մը կը ջախջախուի երկրագունդին վրայ:

ԿԵԱՆՔԻ ՔԱՂՅՐ ՍԿԶԲՆԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ


Երկրագունդին վրայ կեանքը «բազորութեան» կրնայ սկսած ըլլալ՝ սնանկելով անջրպետէն եկած շաքարով: Այս գաղափարը հիմնուած է միլիառաւոր տարիք ունեցող 2 երկնաքարերու մէջ շաքարի յայտնաբերումին վրայ: ՆԱՍԱի հետազոտողներ կ'ըսեն, թէ Մըրչիսըն եւ Մըրէյ երկնաքարերուն ուսումնասիրութիւնը յայտնաբերած է նիւթեր, կոշուած՝ «փոլիոլ», որ շաքարի մասնազտական անունն է: Մըրչիսըն երկնաքարը գտնուած է 1969ին, Աւստրալիոյ մէջ. իսկ Մըրէյ երկնաքարը գտնուած է Քանադայի մէջ: Կ'ենթադրուի, որ անոնք բեկորներն են շատ աւելի հին եւ մեծ մարմիններու, որոնք անցեալին գտնուած են Հրատի եւ Լուսնի միջեւ աստղակերպերու գոտիին մէջ:



Կեանքի համար անհրաժեշտ նիւթերը արդեօր անջրպետէն եկած են:

մաթիւ այլ մոլեքուլներու: «Ամինօ ասիտ»ներու ներկայութիւնը կրնայ նշանակել, որ երկրագունդին վրայ կեանքի «սերմեր»ը մոլորակին վրայ ինչպէս օրկանական նիւթերէ եկած են: Երկնաքարերուն մէջ շաքարի մոլեքուլներու յայտնաբերումը կրնայ նշանակել, որ կեանքի համար կենսական այլ նիւթ մը եկած է անջրպետէն: Շաքարները կրնան կազմուած ըլլալ նախքան արեգակնային գրուածութեան կազմութիւնը՝ աստղերուն միջեւ շարժող փոշիի պաղ հատիկներու վրայ հանգչող մոլեքուլներու վրայ աստղերու լոյսին ազդեցութեան տակ: Երբ մեր արեգակնային գրուածութիւնը ստեղծուած է, շաքարը կրնայ միախառնուած ըլլալ փոքր մարմիններու, ինչպէս՝ աստղակերպերու, որոնք կազմուած են գրուածութեան ծայրաստիճան պաղ գոտիներուն մէջ: Երբ աստղակերպերը կոտորուած եւ բեկորներու վերածուած են, անոնցմէ ոմանք կրնան երկրագունդին վրայ ինչպիսի մոլեքուլներու ծնունդ տուած ըլլալ:

նախկին աստղաճոյլերու մէջ գետնողութեան: Անոնք «սառցային ծայրամասն են» միայն՝ աստղերու ծնունդի տաք, բեղուն ժամանակամիջոցի մը, որ դարձեալ բնական զոտիներուն 2 ամէնէն հեռուոր եւ յստակ նկարներուն վրայ: Նայելով աստղաճոյլերու գոյներուն՝ Լանգեթա կ'ըսէ, թէ իր կարծիքով, ամէնէն խորունկ գոտիներուն մէջ ամէնէն հեռուոր մարմինները պէտք է կապոյտ-ճերմակ փայլուն «հանգոյցներ»



ՊԱՍԵԹՊՈԼԼԻԲԱՆԱՆԻ ԱՄՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՍԱԺԷՍ ԳՐԱԻՅՑ ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԴԻՐՔԸ

Լիրանանի պասեթպոլի տղոց Ա. դասակարգի ախոյանութեան 18րդ եւ դարձի վերջին հանգրուանի իր կատարած մրցումին, Սաժէս 89-74 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Շանվիլը, անկէ խլեց պարագլուխի դիրքը եւ ախոյանութեան մրցումները աւարտեց առաջին: Իր կատարած վերջին 14 մրցումներուն պարտութիւն չկրած Շանվիլը նահանջեց 2րդ դիրքը, թէեւ անոնց միջեւ կէտերը միեւնոյնն էին, բայց անոնց միջեւ տեղի ունեցած մրցումներուն արդիւնքը նկատի ունենալով, Սաժէս հանդիսացաւ առաջին:

Ստորեւ՝ երթի եւ դարձի մրցումներէն ետք ընդհանուր դասաւորումը կը ներկայացնէ հետեւեալ վերջնական պատկերը:

Table with 5 columns: Rank, Name, ՄՐՑ. ՑԱՂԹ., ՊԱՐՏ., ԿԵՏ. Lists top 10 players and their statistics.

●ԱՅՄՊԻՍՈՎ, յստակացաւ ֆայնըլ սիքսի յայտագիրը: մրցումները կը սկսին այսօր՝ Երեքշաբթի, Ռիատո - Անիպալ մրցումով:

Table with 3 columns: Match, Time, Location. Shows match schedule for June 22.

Table with 3 columns: Match, Time, Location. Shows match schedule for June 23.

Table with 3 columns: Match, Time, Location. Shows match schedule for June 26.

Table with 3 columns: Match, Time, Location. Shows match schedule for June 27.

Table with 3 columns: Match, Time, Location. Shows match schedule for June 29.

Table with 3 columns: Match, Time, Location. Shows match schedule for June 30.

Table with 3 columns: Match, Time, Location. Shows match schedule for July 3.

Table with 3 columns: Match, Time, Location. Shows match schedule for July 5.

Table with 3 columns: Match, Time, Location. Shows match schedule for July 10.

Table with 3 columns: Match, Time, Location. Shows match schedule for July 12.

Table with 3 columns: Match, Time, Location. Shows match schedule for July 13.

Table with 3 columns: Match, Time, Location. Shows match schedule for July 14.

Table with 3 columns: Match, Time, Location. Shows match schedule for July 16.

Table with 3 columns: Match, Time, Location. Shows match schedule for July 17.

Table with 3 columns: Match, Time, Location. Shows match schedule for July 19.

Table with 3 columns: Match, Time, Location. Shows match schedule for July 20.

Table with 3 columns: Match, Time, Location. Shows match schedule for July 23.

Table with 3 columns: Match, Time, Location. Shows match schedule for July 24.

Table with 3 columns: Match, Time, Location. Shows match schedule for July 26.

Table with 3 columns: Match, Time, Location. Shows match schedule for July 27.

ԹԵՆԻՍ. ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ԲԱՅ ՄՐՅԱՇԱՐՔ

ՍԱՖԻՆ ԴՈՒՐՍ ԶԳԵՑ ՍԱՄՓՐԱՍԸ

Աւստրալիոյ թենիսի բաց մրցաշարքին, երէկ Դ. հանգրուանին իր կատարած մրցումին, ուսու Մարաթ Սաֆին մեծ իրագործում մը կատարեց, երբ մրցաշարքէն դուրս ձգեց տիտղոսին թեկնածուներէն՝ ամերիկացի Փիթ Սամփրասը (Մ. Ն.): Ան իր յաղթանակը արձանագրեց երեք ժամ 33 վայրկեան տեւած մրցումէ մը ետք, արձանագրելով՝ 6 - 2, 6 - 4, 6 - 7 եւ 7 - 6 արդիւնք մը:



Սաֆին (աջից) կը փորձէ մխիթարել Սամփրասը

21 տարեկան Սաֆին իր վերջին կրակ շլեմը 2000ին, երբ Եւ. Սփր-նի մրցաշարքին աւարտականին պարտութեան մատնած է նոյնինքն Սամփրասը:

Այս մրցումին նման երկար տեւեց Ուէյն Ֆերէյրա (Հարաւային Աֆրիկէ) - Ալպէր Բոսթա (Սպանիա) հանդիպումը: անիկ տեւեց երեք ժամ 35 վայրկեան եւ վերջ գտաւ Ֆերէյրայի յաղթանակով:

Աղջկանց մրցումներուն, պեյթքաքի ժիւթիկն Էննէն հանգիստ յաղթանակ մը արձանագրեց, երբ 6 - 0 եւ 6 - 3 արդիւնքով պարտութեան մատնեց 12րդ դասուած էյենա Տեմենթիեան (Ռուսիա):

Իր կարգին, ձեռնփոխ Բաֆրիաթի ապահովեց քառորդ աւարտականին իր տոմարը, պարտութեան մատնելով Ռիթա Կրանտէն:

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն (Գ. հանգրուան) արդիւնքները:

Table with 2 columns: Match, Result. Shows tennis match results for June 22.

ՓՈՐԹՈՒԳԱԼԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՊՈԱԻՍԹԱ - ՓՈՐԹՕ 2 - 0

Փորթուգալի ֆութպոլի ախոյանութեան 19րդ հանգրուանի մրցումներուն, շաբթուան գագաթի ճակատումը՝ Պոալիսթայի եւ Փորթոյի միջեւ վերջ գտաւ զաշտին տէրերուն յաղթանակով՝ 2 - 0: Իւրաքանչիւր կիսախաղի Պոալիսթա կողմէ մը նշանակելով մնաց իր նոյն դիրքին վրայ (2րդ), մէկ կէտի տարբերութեամբ ետ մնալով պարագլուխի դիրքը գրաւող Սփորթինկ Լիզպոնէն, որ նոյն արդիւնքով պարտութեան մատնեց Պելենենսէլը (7րդ): Մարիո Ժարտէլ նշանակեց Սփորթինկի երկու կողմը (28րդ եւ 84րդ):

Իր կարգին, Պենֆիեա (3րդ) յաղթանակ մը արձանագրեց, 4 - 1 արդիւնքով յաղթական վերադառնալէ ետք Սալկէյրոշի դաշտէն:

Ստորեւ՝ 19րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Table with 2 columns: Match, Result. Shows football match results for June 22.

ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԲԱԺԱԿ

ՊՈՐՏՕ, ԿԷՆԿԱՆ, ՄԷՍ ԵՒ ԼԻՈՆ՝ ՄԵԾԱԳՈՅՆ ՊԱՐՏԵԱԼՆԵՐԸ

Ֆրանսայի ֆութպոլի մրցումներուն արձանագրուեցան անակնկալներ, որոնց ընթացքին Ա. դասակարգին մաս կազմող ութ խումբեր դուրս մնացին մրցաշարքէն:

Մեծագոյն դարպեալները սակայն եղան Պորթո, Մէս, Լիոն եւ Կէնկան, որոնք դարպութիւններ կրեցին Բ. եւ Գ. դասակարգի խումբերուն մաս կազմող իրենց մրցակիցներէն:

Յաղթանակներ արձանագրողներուն կարգին էին Մարսէյ, Մոնպէ, Փարիզ Սէն Ժերմէն եւ ուրիշներ:

Table with 2 columns: Match, Result. Shows football match results for June 22.

ՍՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՌԵԱԼ ՍԱՏՐԻՏ ԿԸ ՄՆԱՅ ԼԱՒԱԳՈՅՆԸ

Սպանիոյ ֆութպոլի ախոյանութեան 21րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Ռէալ Մատրիտ չկրցաւ յաղթական վերադառնալ Մալայի դաշտէն (12րդ) եւ 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց անոր հետ, շնորհիւ Ֆեռնանտո Մորիենթէսի նշանակած կողմին (68րդ): Մրցումին հաշիւը բացած էր Տելի վալտէս (25րդ), անակնկալի բերելով մայրաքաղաքի կազմը: Այսուհանդերձ Ռէալ Մատրիտ կը մնայ առաջին:

21րդ հանգրուանին մեծագոյն անակնկալը ստեղծեց վերջին դիրքը գրաւող Ռայո Վալեքանո, որ 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Պարսելոնան: Դաշտին տէրերը իրենց կողմը նշանակեցին 25րդ եւ 61րդ վայրկեաններուն: Պարսելոնա իր կողմէն նշանակեց շնորհիւ Զաւէի (57րդ):

Տեղափոխութեան քառորդ յաղթանակ մը արձանագրեց, երբ Լաս Փալմասի դէմ տեղի ունեցած մրցումին, Նաչո Կոնզալէս յաղթանակ մը նուիրեց Լա Քորուսայի, երբ 66րդ վայրկեանին գնդակը սխալմամբ իր բերդէն ներս գետնեց:

Աթլետիկո Պիլայո 3-0 արդիւնքով պարտուած հեռանալէ ետք Մայորքայի դաշտէն (17րդ), 3րդ դիրքէն նահանջեց 5րդ դիրքը:

Ստորեւ՝ 21րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Table with 2 columns: Match, Result. Shows football match results for June 22.

ԴԱՍԱԻՈՐՈՒՄ

Table with 2 columns: Rank, Name, Points. Shows top 5 players and their points.

ԲԱԼՉԻՈ

ԻՆԹԵՐ ՄԻԼԱՆ ԳՐԱԻՅՑ ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԴԻՐՔԸ

Իտալիոյ ֆութպոլի ախոյանութեան (Քալչիո) 19րդ հանգրուանի մրցումներուն, Ինթեր Միլան իր դաշտին՝ «Սան Սիրո»ի մէջ 2 - 0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Փարման (16րդ), գրաւեց ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը, մէկ կէտի առաւելութիւն ունենալով Ա. Էս. Ռոմայի վրայ, որ 1 - 1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց իր հիւր Ուտինէպէի հետ (11րդ), նահանջեց 2րդ դիրքը:

56 հալար համակիրներու ներկայութեան Նետոր Սենսիմի (4րդ) սխալմամբ իր բերդէն ներս եւ Քրիսթիան Վիերի (85րդ) նշանակեցին Ինթերի կողմը:

Իսկ Ուտինէպէի դէմ տեղի ունեցած մրցումին, Կապրիլի Պարիսիոնա իր կազմը փրկեց պարտութենէ մը, երբ 83րդ վայրկեանին նշանակեց Ա. Էս. Ռոմայի հաւասարութեան կողմ (1 - 1):

Շաբաթավերջի մրցումներուն մեծագոյն յաղթանակը, սակայն, եղաւ Լացիո Ռոմա, որ 5 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Փերուզինա: Սիմոնէ Ինցակի (9րդ), Բլաւուտիո Լոփէլ (32րդ), Սթեֆանո Ֆիորի (53րդ), Տեման Սթանքովիչ (57րդ) եւ Փաուլո Սելկո (65րդ) նշանակեցին Լացիոյի կողմը:

Իր կարգին, Եուվենթուս յաղթանակ մը արձանագրեց, 3 - 0 արդիւնքով պարտութեան մատնելով Աթալիպատ: Ալեքի Թաքիարի (34րդ) եւ Տաիտ Թրեպպի (39րդ եւ 73րդ) նշանակեցին Եուվէի կողմը:

Ստորեւ՝ 19րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Table with 2 columns: Match, Result. Shows football match results for June 22.

